ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌՈՂԻՄ, ԹԵ՞ ԻՆՏԵԳՐՈՒՄ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

«Սոցիալական աշխատանք» մասնագիտությունը, որն արևմտյան մշակույթի տեխնոլոգիական նվաճումներից է[1], այսօր արդեն հիմնովին հաստատվել է մեզանում: Մասնագետները փորձում են լուծել անհատների և խմբերի առջև ծառացած սոցիալական հիմնախնդիրները: Նրանց որդեգրած մոտեցումները, որ բխում են մասնագիտության առանձնահատկություններից, ստիպում են իրենց միջամտությունների ժամանակ ամեն կերպ ուժեղացնել ու անկախացնել շահառուներին, որպեսզի մեծանան սոցիալական գործառման նրանց հնարավորությունները: Իրենց պրակտիկայում նրանք հաճախ են գործ ունենում մարդկանց հետ, ում կյանքում սոցիալական հիմնախնդիրներն առաջանում են սոցիալական մեկուսացման, սոցիալական տարբեր համակարգերից դուրս մղվելու, հասարակական տարբեր գործընթացներին մասնակցելու հնարավորությունների սահմանափակման հետևանքով: Հենց այդ պատճառով էլ սոցիալական աշխատողների միջամտությունների մեծ մասի նպատակը շահառուների սոցիալական ներառումն ու ինտեգրումն է, որոնց միջոցով մասնագետները փորձում են մեծացնել շահառուների սոցիալական մասնակցության հնարավորությունները:

Հասարակությունը սոցիալական բարդ համակարգ է՝ բաղկացած բազմաթիվ ենթահամակարգերից: Սոցիալական աշխատողներն այդ համակարգերի և ենթահամակարգերի յուրահատուկ կարգավորողներն են: Առաջնորդվելով տեսության առաջադրած պահանջներով, նրանք միջամտում են ամեն անգամ, երբ սոցիալական բացառման կամ մեկուսացման վտանգ է առաջանում: Նրանց գործունեության հիմքում ընկած են սոցիալական արդարության, իրավահավասարության ու սոցիալական մասնակցության ապահովման սկզբունքները: Սոցիալական աշխատողների թիրախը բնակչության սոցիալապես խոցելի խմբերն են՝ անհատներ, ընտանիքներ, համայնքներ, որոնք իրենց օրգանիզմի, կարգավիճակի, դրության և վիճակի առանձնահատկությունների, տարբեր իրադարձությունների և պայմանների ազդեցության, ոչ ճիշտ վերաբերմունքի պատճառով երբեմն դուրս են մղվում սո-

[1] Տե՛ս **Шанин Т.** Социальная работа как культурный феномен современности. // “Русский Журнал”, 26.09.1997, www.russ.ru:

ցիալական հարաբերություններից, հայտնվում կյանքի մայթեզրին, առանձնացվում հաստատություններում և այլն: Մարդը հասարակության հիմնական ներուժն է, և եթե ինչ-որ պատճառով նա չի մասնակցում հասարակական գործընթացներին, դրանից տուժում է ոչ միայն ինքը, այլև ողջ հասարակությունը: Այսօր Հայաստանում տարբեր առիթներով հաճախ է քննարկման առարկա դառնում կանանց և հաշմանդամների սոցիալական մասնակցության հնարավորությունների մեծացման խնդիրը, երբեմն հաշվարկներ են արվում, որպեսզի ցույց տրվի սոցիալական կորուստների ֆինանսական գինը: Խորհրդային համակարգը, լինելով ամբողջատիրական և միահեծան, սոցիալապես խոցելի բնակչության պաշտպանությունը կազմակերպելիս հաճախ էր կիրառում մոդելներ, որոնք ենթադրում էին բնակչության հիմնական զանգվածից առանձնացում և տեղավորում զանազան հաստատություններում՝ գիշերօթիկներ, մանկատներ, դիսպանսերներ, քրեակատարողական հիմնարկներ: Հետխորհրդային շրջանում սոցիալական փոխակերպումների, ինչու չէ՝ նաև սոցիալական աշխատանքի արժեքների ազդեցության շնորհիվ մշակվեցին և ներդրվեցին այլընտրանքային այնպիսի մոդելներ, որոնք բացառում էին մարդկանց մեկուսացումն ու ինստիտուտավորումը: Սոցիալական ներառումն ու ինտեգրումը սկսեցին դիտվել որպես պարտադիր գործընթացներ և ընթացակարգեր բոլոր այն դեպքերում, երբ մարդիկ ինչ-որ պատճառներով դուրս էին մղվում իրենց համար բնական համարվող համակարգերից, և հետո հարկավոր էր ապահովել նրանց վերադարձը այդտեղ:

Վերաինտեգրման պահանջը պաշտոնապես առաջինն ամրագրվեց քրեական արդարադատության համակարգի ազատազրկված շահառուների հետ կապված գործընթացներում: ՀՀ արդարադատության նախարարի 2008 թվականի թիվ 44 և 2016 թվականի թիվ 279 –Ն հրամաններում հստակ նշվում է, որ քրեակատարողական հիմնարկների սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժինների գործունեության նպատակներից մեկը ազատազրկվածների սոցիալական վերաինտեգրմանը նպաստելն է[2]: Ենթադրվում է, որ իրավախախտների նկատմամբ ազատազրկում սահմանելիս պետությունը դատապարտյալին դուրս է մղում նրա համար բնական դարձած միջավայր – համակարգերից՝ ընտանիք, դպրոց, համայնք, աշխատավայր և այլն, խզում է դրանց ներսում մինչ այդ անհատի հաստատած սոցիալական կապերը և տեղափոխում բանտ: Պատիժը կրելուց հետո, բնականաբար, եթե մարդը երկրից արտաքսման ենթակա չէ կամ այլ երկրի քաղաքացի չէ, պետք է վերադառնա հասարակություն, և նրան պետք է օգնել վերաինտեգրվելու այդ հասարակությանը, այսինքն՝ նախկին կապերից վերահաստատել ցանկալիները և հնարավորինս

[2] Տե՛ս ՀՀ արդարադատության նախարարի 2016 թվականի թիվ 279 – Ն հրամանը:

կանխել անցանկալիների վերականգնումը, ինչպես, օրինակ կապերը հանցագործ խմբերի, հակասոցիալական վարք ցուցաբերող անհատների հետ:

«Ինտեգրում» և «վերաինտեգրում» եզրույթները հանդիպում են նաև երեխաների սոցիալական պաշտպանության համակարգի բարեփոխումների առնչությամբ շրջանառության մեջ դրված փաստաթղթերում: Դրանցում մասնավորապես նշվում է, որ հաստատություններից երեխաներին պետք է վերադարձնել ընտանիքներ և նրանց վերաինտեգրել հասարակությանը[3]: Ինտեգրման և վերաինտեգրման գործընթացների արդյունավետ կազմակերպումը շատ կարևոր է նաև հաշմանդամների և իմիգրանտների հետ տարվող աշխատանքներում, որովհետև երկու դեպքում էլ խոսքը մարդկանց հասարակության մեջ ներառելու մասին է:

«Ներառում» հասկացությունը ՀՀ-ում հիմնականում շրջանառության մեջ դրվեց ներառական կրթության մասին օրենքն ընդունելուց հետո: Այս դեպքում խոսքը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների մասին էր, որոնք մինչ այդ դպրոցական կրթություն էին ստանում հատուկ հաստատություններում: Օրենքը ենթադրում էր հանրակրթական հաստատություններում համապատասխան պայմանների ստեղծում, որը թույլ կտար ներառական կրթության կարիք ունեցող երեխաներին սովորել իրենց հասակակիցների հետ[4]: Սոցիալական ներառման մասին խոսակցություններ ծավալվեցին նաև հաշմանդամների սոցիալական պաշտպանության խնդիրները քննարկելիս, երբ կառավարությունը փորձում էր փոխել իր մոտեցումը՝ բժշկական մոդելից անցում կատարել սոցիալականին[5]: Այսպիսով, այսօր սոցիալական ոլորտի մասնագետների խոսքում՝ բանավոր և գրավոր, հաճախ կարելի է հանդիպել «սոցիալական ինտեգրում» և «սոցիալական ներառում» եզրույթներին: Դրանք հոմանիշնե՞ր են, թե՞ տարբեր իմաստներ ունեն. և հարկավոր է ճշգրտել դրանց բովանդակությունները՝ թյուրմբռնումներից խուսափելու համար:

Մասնագիտական գրականության մեջ հանդիպում ենք նշված եզրույթների այսպիսի սահմանումների.«Ինտեգրացիան հասարակության հետ միանալն է կամ անհատների միավորվելը տարբեր խմբերում… Ներառում նշանակում է, որ հաշմանդամություն ունեցող անձը, կինը, որևէ մեկը ունի նույն իրավունքները... նախասիրությունները

---

[3] Տե՛ս «ՀՀ Կառավարության որոշումը ՀՀ խնամք և պաշտպանություն իրականացնող շուրջօրյա հաստատություններում խնամվող երեխաների վերադարձն ընտանիքներ կազմակերպելու (բեռնաթափում) և երեխաների մուտքը հաստատություններ կանխարգելման ծրագիրը հաստատելու մասին», 17 հուլիսի 2017 թվականի 743 - Ն:

[4] Տե՛ս «ՀՀ օրենքը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին», 25.05.2005:

[5] Տե՛ս «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2006-2015 թվականների ռազմավարական ծրագիր», ՀՀ Կառավարության 2005 թվականի նոյեմբերի 3-ի որոշում:

…ինչպես ցանկացած ոք համայնքում»[6]: Իրականում ներառում նշանակում է ներգրավում որևէ խմբում, համակարգում, որևէ գործունեության մեջ և այլն: Եթե որևէ մեկը սոցիալական ներառման կարիք ունի, ապա կարելի է ենթադրել, որ դրան նախորդել է նրա բացառումը, որը նշանակում է «սոցիալական կապերի խզում»: «Դա մասնակցության, մատչելիության և համերաշխության նվազման գործընթաց է»[7]: 1997 թվականին Մեծ Բրիտանիայի լեյբորիստական կառավարությունը հիմնեց սոցիալական քաղաքականությունը համակարգող մարմին, այսպես կոչված՝ «Սոցիալական բացառման բաժինը» (Unit), որը սոցիալական բացառման և հոգեկան հիվանդության համալիր ուսումնասիրություն կատարեց երկրում[8]: Որպես սոցիալապես բացառվածներ ճանաչվեցին նրանք, ովքեր «…չունեն հնարավորություններ, նյութական միջոցներ կամ այլ բաներ, որպեսզի մասնակցեն սոցիալական, տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքին»[9]: Եվրոպական Միությունը սոցիալական ներառումը սահմանում է որպես մի «գործընթաց, որը երաշխավորում է, որ աղքատության և սոցիալական բացառման ռիսկի առջև գտնվողներն անհրաժեշտ հնարավորություններ և ռեսուրսներ կստանան տնտեսական, սոցիալական և մշակութային կյանքին լիարժեք մասնակցելու համար և կունենան իրենց հասարակության մեջ ընդունված նորմալ կենսամակարդակ և բարեկեցություն»[10]: Այս սահմանումից էլ է զգացվում, որ ներառումը ինքնին չի հանգեցնում մարդու կյանքում նշված փոփոխություններին, այլ այն հնարավորություններ է ստեղծում դրա համար: Այդ հնարավորություններն իրականություն են դառնում հետագայում սոցիալական ինտեգրման շնորհիվ: Այսպիսով, տվյալ փաստաթղթում «ներառում» եզրույթն օգտագործվում է որպես «բացառում» եզրույթի հականիշ: Մարդիկ կարող են բացառվել որևէ խմբից, համայնքից, հասարակությունից համակեցության նորմերը խախտելու, խտրական վերաբերմունքի և այլ պատճառներով: Օրինակ՝ բոլոր հասարակություններում ծանր հանցագործությունների համար մարդկանց դատապարտում են ազատազրկման, որն ավտոմատ հանգեցնում է նրանց բացառմանն իրենց ընտանիքից, համայնքից, աշխատավայրից և այլն: Մարդկության պատմության ընթացքում եղել են շրջաններ, երբ վարակիչ հիվանդությամբ տառապողներին մեկուսացրել են առողջներից՝ նրանց հեռացնելով բնակավայրերից, որպեսզի կանխեն համաճարակը:

Անհատը կարող է ներառված լինել սոցիալական որևէ ենթահամա-

---

[6] https://rnewb.com/blog/2017/9/4/the-difference-between-integration-and-inclusion

[7] The Blackwell Encyclopedia of Sociology. Ed. by G.Ritzer, Blacwell Publishing, v. 9, p. 4411.

[8] Տե՛ս **P. Huxley, S.Evans, S. Madge, M. Webber, T. Burchardt, D. McDavid and M. Knapp**, Development of Social inclusion index to capture subjective and objective life domains (phase II): psychometric development study. http://eprints.lse.ac.uk/41872/, էջ 16:

[9] Նույն տեղում, էջ 17:

[10] Նույն տեղում:

կարգում, բայց բացառված՝ ավելի մեծ համակարգից: Օրինակ՝ Հայաստանում ներառական կրթություն ստացող երեխաները մյուս ենթահամակարգերում ներառված չեն: Կրթական ներառումը դեռ չի երաշխավորում երեխաների սոցիալական ինտեգրում, որի համար աշխատանք պետք է տարվի ընտանիքում, համայնքում և այլ միջավայրերում:

Հետևաբար եթե «ներառում» եզրույթը դիտարկենք որպես բացառման հականիշ, ապա, բնական է, «ինտեգրում»-ն էլ կարող ենք դիտարկել որպես դեզինտեգրման հականիշ: Անգլիացի մտածող Հ. Սպենսերը գտնում էր, որ էվոլյուցիայի ընթացքում անընդհատ տեղի են ունենում ինտեգրման և դեզինտեգրման գործընթացներ[11]: Հետևաբար ինտեգրումը կարելի է հասկանալ որպես առանձինի միավորում գոյություն ունեցող ամբողջի հետ կամ էլ առանձին տարրերի միավորում որպես մեկ ամբողջություն: Ոմանք սոցիալական ինտեգրման կարևոր միջոց են համարում աշխատանքը, քանի որ այն մարդուն օժտում է որոշակի կարգավիճակով և դերով, հարստացնում է նրա սոցիալական կապիտալը[12], հետևաբար, եթե մարդը կորցնում է աշխատանքը, դա հանգեցնում է նրա դեզինտեգրմանը:

Մանկատանը և գիշերօթիկ այլ հաստատություններում խնամվող երեխաները ներառված են այդ հաստատություններ, նույնիսկ կարող են նաև ինտեգրված լինել դրանցում, բայց նրանք բացառված են ընտանիքներից: Հետևաբար հաստատություններում խնամվող երեխաների ապաինստիտուտավորումը, որն իրականացվում է Հայաստանում, նշանակում է նրանց ներառում ընտանիք, սակայն ոչինչ չի ասում նրանց սոցիալական ինտեգրման մասին: Ներառումը ինտեգրման նախապայման է: Հետևաբար՝ վերը հիշատակված երկու եզրույթները ոչ թե հոմանիշներ են, այլ տարբեր գործընթացներ նկատի ունեցող բառեր: Ինտեգրումը լայն իմաստով ընկալվում է որպես անհատի կապվածությունն այլ անհատներին սոցիալական ցանցում[13]: Իրականում սոցիալական ինտեգրումը հարկավոր է դիտարկել համակարգերի տեսանկյունից: «Քանի որ ժամանակակից հասարակություններում… որևէ ոլորտում ինտեգրումը մեխանիկորեն չի հանգեցնում գործառական համակարգերին մասնակցության,...պետք է լինի մեխանիզմ այդ համակարգերին մասնակցելու համար: Այս մեխանիզմը կոչվում է ներառում: Ներառումը նշանակում է, որ անձի յուրահատուկ հմտությունները և գործողությունները համապատասխանում են սոցիալական համակարգին»[14], հետևաբար ներառել որևէ մեկին, որը դուրս է մնացել սոցիալական խմբերից ու

---

[11] Տե՛ս **Спенсер Г.** Основания Социологии // Тексты по истории социологии XIX вв.: хрестоматия/ сост. и ответ.ред В.Добреньков, Л. Беленкова. М., Наука. 1994, էջ 53:

[12]Տե՛ս **L. Jones**, Unemployment and Social Integration: A review.- The Journal of Sociology and Social Welfare. Volum 15, Issue 4, էջ 164:

[13] Տե՛ս **Ch. Falci, C. McNelly**, Too Many Friends: Social Integration, Network Cohesion and Adolescent Depressive Symptoms.-http://digitalcommons.unl.edu/sociologyfacpub, էջ 2:

[14] «The Blackwell Encyclopedia of Sociology», v. 9, p. 4430.

գործընթացներից, նշանակում է գտնել ձևը, որով հնարավոր կլինի նրան ներառելու խումբ, մասնակցելու դրա գործունեությանը:

Ստացվում է, որ ինտեգրումն ավելի լայն հասկացություն է, քան ներառումը: Ներառումը ենթադրում է համակարգ ներգրավելու գործընթացը, ինտեգրումը՝ դրանից հետո գործառույթներ ստանձնելու գործընթացը: Քանի որ սոցիալական համակարգերը բաց են, ապա նոր տարրերի մուտքը կամ նախկինում բացառված տարրերի վերադարձը այնքան էլ դժվար չէ: Դրա համար պետք է օգնել ներառվելու և հարմարվելու, ինչն ապահովվում է միջավայրային փոփոխություններով և ներառվողի հարմարվելով:

Որպեսզի անհատը ունենա համակարգին համապատասխան հմտություններ և իրականացնի պահանջվող գործողությունները, նա պետք է սոցիալականացվի և հարմարվի: Սոցիալական մասնակցությունը կարևոր նախապայման է մարդկանց և հասարակությունների բարեկեցության համար, և դա մեծացնելու համար օգտագործվում են սոցիալական պաշտպանության համակարգի, այդ թվում և սոցիալական աշխատանքի ծառայությունների հնարավորությունները: Սոցիալական ոլորտի մասնագետներն օգտագործում են տարբեր գործիքներ և միջոցներ՝ ապահովելու «բացառվածների» և խոցելի բնակչության ներկայացուցիչների սոցիալական մասնակցությունը[15]:

Մասնագետների կարծիքով՝ սոցիալական ինտեգրացումը ունի երեք չափում՝ սոցիալական կապերի թիվը, տեսակը և հաճախականությունը[16]: Այսինքն՝ անհատը կամ խումբը որքան խիտ և բարդ կապերով է կապված այլ անհատներին, խմբերին, կազմակերպություններին, այնքան ինտեգրված է: Սակայն եթե ինտեգրումը ցանկալի է սոցիալական համակարգի տեսանկյունից, ապա գերինտեգրումը խնդրահարույց է անհատի կամ խմբի շահերի առումով, որովհետև արդյունքը պարունակում է ինքնության կորստի ռիսկ, երբեմն նույնիսկ անհատի մեջ կարող են առաջանալ հոգեկան խնդիրներ[17], մասնավորապես՝ զարգացած ալտրուիզմը կարող է հանգեցնել ինքնազոհության: Սոցիալական համակարգերում անհատների և խմբերի ինտեգրվածության մեծացումը մի կողմից նպաստում է նրանց սոցիալական հնարավորությունների մեծացմանը, մյուս կողմից սահմանափակվում է մարդու ազատությունը՝ ստիպելով ենթարկվել հասարակության մեջ գործող ստանդարտներին: Սոցիալական համակարգերը ինքնակազմակերպվող, ինքնակառավարվող[18] և բաց են: Նրանց մեջ նոր տարրերի ներառումը տեղի է ունենում բավականին հեշտ: Շատ

---

[15] Տե՛ս նույն տեղը, էջ 4431:

[16] Տե՛ս **C. Falcy, C. McNeely**, նշվ. աշխ., էջ 3:

[17] Տե՛ս նույն տեղը, էջ 4:

[18] Տե՛ս **Шкаратан О.** Общество как социальная система. Социологический журнал. 2011, № 4, էջ 123:

ավելի դժվար է ներառումից հետո ինտեգրումը: Ինտեգրումը սոցիալական համակարգի գործառման առանձնահատկություններից է[19]: Առանց ներառված նոր տարրերի ինտեգրման սոցիալական համակարգերի նորմալ գործառումը վտանգվում է: Եթե հասարակության մեջ իմիգրանտների խումբ է հայտնվում, եթե համայնքում նոր բնակիչներ են հայտնվում, եթե ընտանիք նոր անդամ է մուտք գործում, եթե աշակերտական և ուսանողական խմբում նոր անդամ է ներառվում և այլն, թվարկված համակարգերն ու ենթահամակարգերը իրականացնում են գործընթացներ ներառվածների հարմարման և ինտեգրման ուղղությամբ: Ինտեգրման որոշակի քայլեր են անում նաև ներառվողները լեզվական և մշակութային այլ տարբերությունների հաղթահարում, նորմերի և արժեքների ընդունում սոցիալականացման և հարմարման մեխանիզմների օգնությամբ և այլն: Այսօր գլոբալացման գործընթացները երկրագնդի ողջ բնակչությանն առաջադրում են մարտահրավերներ, որոնց հաղթահարումն անհնար է առանց քաղաքական, տնտեսական, մշակութային ինտեգրման: Մարդկանց շարժունության մեծացումը ստեղծում է մարգինալացման ռիսկ, որի հաղթահարումը ստիպում է նրանց սոցիալական ինտեգրման, նրանց քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային ինքնության որոշակիացման միջոցներ ձեռնարկել, ինչին հնարավոր է հասնել միայն սոցիալական ինտեգրմամբ:

Սոցիալական համակարգերի բաց լինելու առանձնահատկությունը թույլ է տալիս դրանք դիտարկել որպես ավելի բարձր մակարդակի մեկ կամ մի քանի համակարգերի մաս, այսինքն՝ ենթահամակարգ[20]: Հենց այս հանգամանքն էլ վկայում է, որ անձը կարող է մի ենթահամակարգում ինտեգրված լինել, մյուսներում՝ ոչ: Դրա պատճառը կարող է լինել համապատասխան պահանջմունքների բացակայությունը կամ զանազան պատճառներով առաջացող սահմանափակումները: Օրինակ՝ այսօր Հայաստան տեղափոխված սիրիահայերը քաղաքացիություն ընդունած չլինելու պատճառով չեն ինտեգրվել ընտրական ենթահամակարգեր և այլն: Երբ երեխան ծնվում է, նա ներառվում է ընտանիք և մի շարք այլ համակարգեր, այդ թվում և սոցիետալ համակարգ, բայց սոցիալական ինտեգրման համար նա պետք է անցնի սոցիալականացման տևական գործընթաց, որը շարունակվում է ողջ կյանքի ընթացքում: Սոցիալական այնպիսի բացասական երևույթներ, ինչպիսիք են օրինակ՝ հաշմանդամությունը, գործազրկությունը, բանտարկությունը, խտրական վերաբերմունքը և սոցիալական մեկուսացում ու բացառում առաջացնող մյուս դեպքերը, հանգեցնում են նրա ապաինտեգրմանը: Սոցիալական համակարգը չի կարող երկար ժամանակ ներառված

[19] Տե՛ս նույն տեղը, էջ 128:

[20] Տե՛ս **Парсонс Т.** Социальные системы. // «Вопросы социальной теории». М., 2008. Том II. Вып. 1(2), էջ 43:

պահել դեզինտեգրված տարրին: Այն կա՛մ պետք է բացառվի, դուրս մղվի համակարգից, կա՛մ ինտեգրվի: Հասարակության համակարգը և նրա ենթահամակարգերը համախմբում են իրենց ուժերը՝ հավասարակշռությունն ու կայունությունը վերականգնելու համար: Սոցիալական աշխատանքը՝ որպես սոցիալական տեխնոլոգիա, կարևոր դեր ունի համակարգապահպանման այդ գործընթացում: Համակարգային մոտեցումը մասնագետներին ստիպում է կանխարգելիչ միջամտություններ իրականացնել բոլոր այն դեպքերում, երբ դեզինտեգրման և բացառման ռիսկեր են առաջանում: Իսկ երբ ռիսկը իրականություն է դառնում, սոցիալական աշխատողները կազմակերպում են սոցիալական վերականգնման և ներառման, վերասոցիալականացման և վերաինտեգրման գործընթացներ, օրինակ՝ հաշմանդամ դարձածների, ազատազրկման վայրերից տուն դարձողների, խնամքի հաստատություններից ընտանիք վերադարձվող երեխաների համար և այլն: Սոցիալական աշխատանքը սոցիալապես բացառվածների և մեկուսացվածների ներառման ու ինտեգրման ուղղությամբ մեծացնում է սոցիալական համակարգերի գործառական կարողությունները, ավելացնում մարդկանց սոցիալական մասնակցությունը, բարելավում նրանց կյանքի որակը:

Բանալի բառեր – *սոցիալական բացառում, սոցիալական ներառում, սոցիալական ինտեգրում, ապաինտեգրում, սոցիալական աշխատանք, սոցիալական համակարգ*

АРТАК ХАЧАТРЯН – ***Социальное включение или социальная интеграция?*** – Содержание понятий «социальное включение (инклюзия)» и «социальная интеграция» анализируется в статье в контексте социальной работы. Сопоставление различных определений позволяет прийти к выводу, что социальное включение – лишь первый шаг в процессе социальной интеграции; успешная инклюзия создаёт благоприятные предпосылки для социального участия социально изолированных и исключённых людей.

Ключевые слова: *социальное исключение, социальное включение (инклюзия), социальная интеграция, дезинтеграция, социальная работа, социаьная система*

ARTAK KHACHATRYAN – ***Social Inclusion or Integration?*** – The article focuses on the analysis of the terms “social inclusion” and “social integration” in the context of social work. By comparing the different definitions in various sources, the author makes the conclusion, that social inclusion is the first step in the process of social integration, the realization of which leads to favorable preferences for the socialized part of the socially isolated and excluded people.

Key words: *social exclusion, social inclusion, social integration, disintegration, social work, social system*

Ներկայացվել է՝ 10.03.2019, գրախոսվել է՝ 05.04.2019, ընդունվել է տպագրության՝ 22.04.2019